## Դատաիրավական բարեփոխումներ. խնդիրներ, լուծումներ

28.10.2011 12:22

Հարգելի գործընկերներ,

«Ֆինանսաբանկային Քոլեջ» Հիմնադրամը, հավատարիմ իր առաքելությանը` նպաստել ՀՀ ֆինանսական համակարգի մշակույթի զարգացմանը, շարունակում է իրականացնել «Հայաստանը որպես իրականացվող հնարավորությունների երկիր» խորագրով ծրագիրը:

Ծրագիրը նպատակաուղղված է`

- ՀՀ ֆինանսական համակարգի աշխատակիցների ու հավակնորդների իրազեկվածության բարձրացմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը,
- ՀՀ ֆինանսական համակարգի համար նոր հնարավորությունների բացահայտմանն ու արդյունավետ իրականացմանը:

«Հայաստանը որպես իրականացվող հնարավորությունների երկիր» ծրագիրը կրում է շարունակական բնույթ և, մասնակիցների ու զեկուցողների կարծիքով, նպաստում է ՀՀ ֆինանսական համակարգում արդիական մտածողության ձևավորմանը:

Սիրով հրավիրում ենք Ձեզ «Հայաստանը որպես իրականացվող հնարավորությունների երկիր» ծրագրի իններորդ հանդիպմանը, որը կկայանա **2011 թվականի նոյեմբերի 4-ին, ժամը` 14:00-ից 16:00-ն,** Մոսկվայի տան դահլիճում (ք. Երևան, Արգիշտի 7):

**«Դատաիրավական բարեփոխումներ. խնդիրներ, լուծումներ»**

թեմայով ներկայացմամբ հանդես կգա **ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:**

Հանդիպմանը մասնակցելու դեպքում խնդրում ենք Ձեզ մինչև 2011 թվականի **նոյեմբերի 2-ը** տեղեկացնել մեզ այդ մասին 53-77-98 հեռախոսահամարով:

Բեռնել օրակարգը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })